ԴԱՐՁԻՐ ՄԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑԸ ԽՆԱՅԻՐ ԳՈՒՄԱՐԴ

Միջազգային բրոշյուր
Հայաստան

Share
Save

Flutter™

ԴԱՐՁԻՐ ՄԵՐ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԸ

Մենք ցանկանում ենք, որ Flutter ընտանիքում բոլորն ունենան իրենց մասնաբաժինը մեր կոլեկտիվ, համաշխարհային հաջողության մեջ: Այսպիսով, ուրախ ենք տեղեկացնել, որ մեր Sharesave պլանը վերադառնում է 2024 թվականի համար:

Sharesave-ը արդյունավետ և կայուն միջոց է գումար խնայելու և զարգացող ընկերության մասը լինելուց օգուտ քաղելու համար:

Sharesave-ը հասանելի է բոլոր աշխատակիցներին, անկախ նրանից՝ դուք միացել եք մեզ մշտական կամ ժամկետային պայմանագրով: Կարող եք դիմել նաև, եթե նոր եք միացել և դեռ փորձաշրջանի մեջ եք:*

Ահա ավելին պլանի և նրա մասին, թե ինչպես է այն աշխատում:

*Դուք չեք կարող դիմել Sharesave-ի համար, եթե աշխատում եք որպես կապալառու: 2024 թ. նոյեմբերի 26-ին դուք արդեն պետք է լինեք գրանցված աշխատակից:

Ինչո՞ւ Sharesave-ը:

Առօրյա ծախսերը հաճախ դժվար է հոգալ առանց մի կողմ դնելու լրացուցիչ գումար գտնելու: Եվ անգամ երբ սկսում եք խնայել, այդ գործընթացը շարունակելը կարող է բավականին բարդ լինել:

Sharesave-ի միջոցով դուք կարող եք սկսել խնայել փոքր գումարից, և մենք արել ենք այնպես, որ ձեզ համար հեշտ լինի շարունակել: Ձեր խնայողության գումարը ամեն ամիս կհանվի ձեր աշխատավարձից՝ աշխատավարձի վերահաշվարկի միջոցով, այնպես որ կարող եք հանգիստ լինել՝ իմանալով, որ մենք հոգում ենք ամեն ինչի մասին:

Ինչպե՞ս է աշխատում Sharesave-ը

Դուք խնայում եք ամեն ամիս երեք տարի (ճշգրիտ՝ 36 ամիս): Կարող եք խնայել որոշակի նվազագույն և առավելագույն գումարի միջակայքում (և ձեր ընտրած գումարը պետք է նույնը մնա ողջ ընթացքում): Նվազագույն և առավելագույն գումարները նույնն են բոլոր վայրերում, միայն փոխարկված են տեղական արժույթի:

Եթե արդեն ունեք գործող այլ Sharesave ծրագրեր, ապա այս առավելագույն գումարը կիրառվում է բոլոր ծրագրերի համար:

Մինչև Sharesave-ով խնայողությունը սկսելը, ձեզ կտեղեկացնեն բաժնետոմսի գնի մասին: Սա կլինի 2024 թվականի նոյեմբերի 25-ի բաժնետոմսերի միջին գինը՝ 25% զեղչով: Եթե երեք տարվա ավարտին բաժնետոմսերի գինը այս արժեքից ավելի բարձր լինի, դա կդառնա ձեր շահույթը:

Երկիր	Արժույթ	Ամսական նվազագույն խնայողության գումար	Ամսական առավելագույն խնայողության գումար
Armenia	EUR	12	500



Երեք տարվա ավարտին*, դուք կարող եք ընտրել՝

ԳՆԵԼ

Flutter Entertainment plc-ի բաժնետոմսերը՝ 25% զեղչով: Այդ դեպքում դուք կդառնաք բաժնետեր և հնարավորություն կունենաք մասնակցելու մեր համաշխարհային հաջողությանը:

ԿԱՄ

ՎԱՃԱՌԵԼ

ձեր գնած բաժնետոմսերը՝ շարունակելով վայելել 25% զեղչի առավելությունը

ԿԱՄ

ՎԵՐՑՆԵԼ

ձեր խնայողությունները հետ, սակայն այս դեպքում զեղչի 25%-ի առավելությունը չի կիրառվի

*Երբ ամբողջությամբ կուտակեք ձեր խնայողությունները, դուք կունենաք վեց ամիս որոշելու, թե ինչ անել ձեր խնայողությունների հետ:

Բաժնետոմսերի մասին

Երեք տարվա ավարտին դուք կունենաք հնարավորություն գնելու Flutter Entertainment plc-ի բաժնետոմսեր:

Սա նշանակում է, որ դուք կդառնաք մեր ընկերության մասը և բաժնետերը: Այս բաժնետոմսերը ցուցակագրված են Լոնդոնի ֆոնդային բորսայում, և ինչպես բոլոր բաժնետոմսերի դեպքում, դրանց արժեքը երեք տարիների ընթացքում կփոփոխվի: Ընդհանուր առմամբ, եթե մենք լավ արդյունքներ ենք ցուցաբերում, կարող եք սպասել, որ մեր բաժնետոմսերի գինը կբարձրանա, ու ձեր խնայողություններն էլ կշահեն դրանից:



Sharesave-ը գործնականում



Ահա օրինակ, որը ցուցադրում է Sharesave-ին մասնակցելու օգուտները.

Ռիքը սկսեց ամեն ամիս 70.00 € խնայել Sharesave ծրագրում 2023 թվականին: Օպցիոնի գինը սահմանվեց 105.28 £*: Երեք տարիների ընթացքում նա խնայեց 2,520.00 € (համարժեք է 2,160 £):

Եռամյա պլանի ավարտին Ռիքը տեսավ, որ բաժնետոմսերի գինը բարձրացել է և դարձել 150.00 £:

Նա որոշեց իր խնայողությունները օգտագործել բաժնետոմսեր (20 բաժնետոմս) գնելու համար:

Խնայված գումարի և իր բաժնետոմսերի արժեքի միջև տարբերությունը կազմեց 979.68 €, ինչը նշանակում է, որ նա ստացավ ավելի քան 35% շահույթ:

*2023 թվականի Sharesave-ի օպցիոնի գին (FLTR – LSE)

Հիշե՛ք, որ նախորդ արդյունքները չեն կարող երաշխավորել ապագայի արդյունքները: Ներդրումների արդյունավետությունը երաշխավորված չէ, և դրանց արժեքը կարող է նվազել, ինչպես նաև բարձրանալ: Ձեր խնայողությունները կարող եք հանել ամբողջությամբ՝ թե՛ պլանի ընթացքում, թե՛ դրա ավարտից հետո: Վերոնշյալ օրինակը ենթադրում է, որ արտարժույթի փոխարժեքը երեք տարվա ընթացքում չի փոխվում: Ավելի մանրամասն օրինակների համար այցելեք www.flutter-shareplans.com:

Sharesave-ի առավելությունները համառոտ

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՆՑ.

1

Եթե դուք վաճառեք բաժնետոմսերը, ապա կօգտվեք 25% զեղչից, ինչպես նաև բաժնետոմսերի գնի աճից:

2

Եթե դառնաք Flutter-ի ընտանիքի բաժնետեր, կօգտվեք 25% զեղչից և կվայելեք մեր ապագա հաջողություններից բաժին ունենալու հնարավորությունը:

3

Եթե հետ վերցնեք ձեր խնայողությունները, կստանաք խնայած գումարը՝ առանց կորուստների:

4

Ձեր օպցիոններն օգտագործելու վրա կարող է կիրառվել եկամտահարկ և սոցիալական ապահովագրության վճարներ: Եթե կա վճարման ենթակա հարկ , ապա այն կկիրառվի բաժնետոմսերի արդար շուկայական արժեքի և ձեր կողմից բաժնետոմսերի համար վճարված գումարի միջև եղած տարբերության վրա:

Ձեր երկրում վճարման ենթակա հարկերի մասին մանրամասների համար տես էջ 10-ի աղյուսակը:

ՊԱՏՐԱ՞ՍՏ ԵՔ ՄԻԱՆԱԼ SHARESAVE-ին:

Միանալու համար սեղմեք այստեղ>

Օգտակար է իմանալ

Եթե ձեր պլանները փոխվեն

Մենք հասկանում ենք, որ կյանքը կարող է անկանխատեսելի լինել, ուստի օգտակար կլինի իմանալ, որ Sharesave-ը կարող է հարմարվել ձեր կարիքներին:

Դուք կարող եք դադարեցնել պլանին վճարումներ կատարելը՝ մինչև վեց ամսով (և դրանք պարտադիր չէ, որ լինեն իրար հաջորդող), և երբ կրկին պատրաստ կլինեք շարունակելու խնայողությունները, այդ ամիսները պարզապես կավելացվեն պլանի սկզբնական ժամկետին:

Այս երեք տարիների ընթացքում դուք ցանկացած ժամանակ կարող եք դադարեցնել խնայողությունները և հետ ստանալ արդեն խնայված գումարը:

Եթե հեռանում եք Flutter-ից

Ցավում ենք, որ ստիպված եք հեռանալ, բայց եթե լքում եք Flutter ընտանիքը, դուք միշտ հետ կստանաք ձեր խնայած գումարը: Եթե հեռանալու պատճառը ձեր կենսաթոշակի անցնելն է որոշակի տարիքում, առողջական խնդիրներն են կամ կրճատվել եք, ապա կարող եք կա՛մ հետ ստանալ խնայողությունները, կա՛մ գնել ավելի քիչ քանակությամբ բաժնետոմսեր:

Եթե Flutter-ի ընտանիքում այլ ընկերություն եք տեղափոխվում, կարող եք շարունակել խնայողությունները (սակայն հարկ կլինի ստեղծել փոխանցման կարգ՝ խնայողությունները շարունակելու համար):

Եթե տեղափոխվում եք այլ երկիր, ցանկացած SAYE շահույթի և բոնուսի համար կիրառվում է տեղական հարկային օրենսդրությունը, ինչը ձեզ հետ այդ կքննարկվի այդ պահին:

Եթե ցանկանում եք ավելին իմանալ Sharesave-ի մասին

Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել flutter-shareplans.com կայքում:

Sharesave ըստ տեղանքի

Ստորև բերված աղյուսակը մանրամասնորեն ներկայացնում է Sharesave պլանը ըստ երկրների: Կախված ձեր գտնվելու վայրից՝ պարզապես իջեք ներքև և գտեք ձեզ համապատասխանող տեղեկությունները:

Երկիր	Արժույթ	Նվազագույն խնայողության գումար	Առավելագույն խնայողության գումար	Խնայողությունները սպասարկող	Հարկեր	Խնայողությունները պաշտպանվա՞ծ են:
Armenia	EUR	12	500	Barclays Euro (Flutter Treasury)	Եկամտահարկը ենթակա է վճարման ձեր օպցիոնի իրացման պահին՝ արդար շուկայական արժեքի և իրացման գնի միջև եղած տարբերության համար՝ ձեր սահմանային հարկային դրույքաչափով: Վճարման ենթակա եկամտահարկը կպահի ընկերությունը և ձեր անունից կփոխանցի հարկային մարմնին:	Այո - Ավանդատուի փոխհատուցման սխեմայով

Հարկային օրենսդրությունը կարող է փոփոխվել, և բաժնետոմսերը վաճառելու պահին գործող կանոնները կարող են տարբերվել ներկայիս կանոններից: Խնդրում ենք հաշվի առնել, որ վերոնշյալ տեղեկատվությունը խորհրդատվություն չէ, և եթե ունեք ձեր հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցեր, պետք է դիմեք որակավորված հարկային խորհրդատուի:

Եթե ցանկանում եք միանալ Sharesave-ին

2024 թվականի դիմումների համար Sharesave-ը բացվում է 2024 թ. նոյեմբերի 26-ին, և առցանց դիմելը շատ հեշտ է: http://flutter.solium.com

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԵՔ ԽՆԱՅՈՒ՞Մ
Կարող եք ակտիվացնել ձեր հաշիվը՝ սեղմելով այս հղմանը.

Ակտիվացնել իմ հաշիվը >

Անհրաժեշտ է ակտիվացնել ձեր հաշիվը «Իմ ընկերության էլ. փոստի հասցեով»/ 'My company email address' տարբերակով: Եթե չունեք Flutter-ի էլ. փոստ, ձեզ անհրաժեշտ կլինի օգտագործել ձեր տեղական ՄՌ համակարգում գրանցված անձնական էլ. փոստի հասցեն:

Ձեր ճիշտ էլ. հասցեն մուտքագրելուց հետո դուք կստանաք էլ. նամակ, որի մեջ կլինի ձեր հաշիվն ակտիվացնելու հղումը: **Խնդրում ենք նկատի ունենալ, որ էլ. նամակով ակտիվացման գործընթացն ավարտին հասցնելու համար ձեզնից կպահանջվի տրամադրել որոշակի տեղեկություններ: (Ծննդյան ամսաթիվ և ազգանուն)**

Սեղմեք հղմանը և անցեք վավերացման էջ: Այնտեղ մուտքագրեք պահանջվող նույնականացման տվյալները:

Ձեր անձը նույնականացնելուց հետո ստեղծեք մուտքի ID, մուտքանուն և գաղտնաբառ: Խնդրում ենք նկատի ունենալ, որ եթե որոշեք չստեղծել մուտքանուն, որպես մուտքանուն կօգտագործվի հաշվի համարը: Դուք անմիջապես կստանաք հասանելիություն ձեր հաշվին:

ԱՐԴԵՆ ԽՆԱՅԵԼ Ե՞Ք ՆԱԽԿԻՆՈՒՄ:
Եթե արդեն ունեք Shareworks հաշիվ, մուտք գործեք ձեր օգտանունով և գաղտնաբառով, ինչպես դա սովորաբար անում եք:

Մուտք գործեք >

Դուք Sharesave-ի համար դիմում եք կատարում ձեր էջի Task Area հատվածում՝ պարզապես սեղմելով Apply for a Contract:



Այս տարվա Sharesave դիմումները պետք է կատարվեն մինչև 2024 թ. դեկտեմբերի 10-ը՝ 23:59 GMT:

Եթե ցանկանում եք միանալ Sharesave-ին

2024 թվականի դիմումների համար Sharesave-ը բացվում է 2024 թ. նոյեմբերի 26-ին, և առցանց դիմելը շատ հեշտ է: flutter.solium.com

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ Ե՞Ք ԽՆԱՅՈՒՄ
Եթե նախկինում երբեք չեք խնայել Sharesave-ով, անհրաժեշտ կլինի գրանցվել Shareworks-ի հաշվում, և սկսելու համար ձեզ կուղարկվի ակտիվացման էլ. նամակ:

ԱՐԴԵՆ ԽՆԱՅԵԼ Ե՞Ք ՆԱԽԿԻՆՈՒՄ:
Եթե արդեն ունեք Shareworks հաշիվ, մուտք գործեք ձեր օգտանունով և գաղտնաբառով, ինչպես դա սովորաբար անում եք:

Դուք Sharesave-ի համար դիմում եք կատարում ձեր էջի Task Area հատվածում՝ պարզապես սեղմելով Apply for a Contract:



Այս տարվա Sharesave դիմումները պետք է կատարվեն մինչև 2024 թ. դեկտեմբերի 10-ը՝ 23:59 GMT:

Կարևոր ամսաթվեր

Օպցիոնի գնի սահմանում՝ 2024 թ. նոյեմբերի 25

Դիմումների պատուհանը բացվում է՝ 2024 թ. նոյեմբերի 26

Դիմումների պատուհանը փակվում է՝ 2024 թ. դեկտեմբերի 10 (23:59 GMT)

Ձեր Sharesave-ը կսկսվի 2025 թ. փետրվարի 1-ին, և մենք ձեր աշխատավարձից առաջին պահումը կանենք 2025 թ. հունվարին: Եթե ինքնուրույն եք խնայում, ապա անհրաժեշտ կլինի սկսել խնայել 2025 թ. հունվարից:

Ձեր Sharesave ծրագիրը կավարտվի 2028 թ. փետրվարի 1-ին, և դուք կունենաք վեց ամիս՝ որոշելու, թե երբ եք ցանկանում օգտագործել ձեր խնայողությունները՝ բաժնետոմսերը օպցիոնի գնով գնելու, ինչպես նաև դրանք պահելու կամ վաճառելու համար:

Դուք կկարողանաք կայացնել ձեր խնայողությունների վերաբերյալ որոշումը և մեզ դրա մասին տեղեկացնել մինչև 2028 թ. հուլիսի 30-ը:

ԴԱՐՁԵՔ ՄԵՐ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑԸ

«Խորհուրդ ենք տալիս բոլոր աշխատակիցներին դիտարկել Sharesave-ի միջոցով ստացվող հնարավորություններն ու առավելությունները: Դա կարող է լինել հիանալի ընտրություն՝ անկախ նրանից, թե միայն փոքր գումար եք կարող խնայել ամեն ամիս, թե ցանկանում եք դիվերսիֆիկացնել ձեր ներկայիս ներդրումները»:

Share Plans թիմ

Flutter™